

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԸ**

*Բանայի բառեր – Պողոս Նուբար, Տամատյան, Հայկական հարց, ՀՍՌԿ, Ռամկավարներ, պատրիարքարան, կոտորածներ, պատվիրակություն, Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Ռուսաստան*

XX դարի սկզբին թուրքական հայաստյաց քաղաքականությունից խիստ թուլացած, գերտերությունների պաշտպանությունից զրկված և նրանց զավթողական ծրագրերի իրականացման նկրտումների խաղաքարտը դարձած հայ ժողովուրդն աշխարհակործան մարտահրավերներին դեմ առ դեմ կանգնեց միայնակ: Սակայն, շնորհիվ առաջադեմ մտավորականության և ազգային կուսակցությունների քարոզչական և կազմակերպչական աշխատանքների, կարողացավ արագ սթափվել և ստեղծված իրավիճակից դուրս ելնելու ուղիներ փնտրել:

Ընդգծենք, որ Հայկական հարցը սուկ դիվանագիտական եզրույթ չէ, հետևապես հարկավոր է այն դիտարկել նաև իրավաբանական, տնտեսագիտական, ժողովրդագրական, մշակութային և էթնոհոգեբանական տեսանկյուններից: Ընդհանուր առմամբ, այդ հարցի պատմությունը վատ չէ ուսումնասիրված, սակայն այդ առնչությամբ ավանդական ազգային կուսակցությունների վերաբերմունքի առումով դեռևս շատ բան կա ասելու:

\*\*\*

Իբրև Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս՝ Հայկական հարցը միջազգային դիվանագիտական փաստաթղթի տեսքով ձևակերպվեց 1878 թ. փետրվարի 19-ի (մարտի 3-ի) Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ և 1878 թ. հունիսի 1-ի (13-ի) Բեռլինի վեհաժողովի պայմանագրի 61-րդ հոդվածներով: Այնուհետև Հայկական հարցը դարձավ հայ ժողովրդի անբաժանելի ուղեկիցն առ այսօր՝ հաճախ տեղիք տալով բուռն քննարկումների, հուսախաբությունների և հուսալքումների, ինչպես նաև ազատագրական պայքարի վերելքների:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի վեհաժողովից հիասթափված Արևմտյան Հայաստանում մեկը մյուսի ետևից ասպարեզ իջան ազգային կուսակցություններ. 1885 թ.՝ Արմենականը, 1887 թ.՝ Հնչակյանը և 1890 թ.՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որոնք հետապնդում էին մեկ հիմնական նպատակ՝ օսմանյան գեղենից ազատագրել իրենց բռնազավթված հայրենիքն ու տառապյալ հայ ժողովրդին, լուծում տալ Հայ-

կական հարցին: Հայաստանի<sup>1</sup> ազատագրմանը նպատակաուղղված նրանց ծրագրերի միջև եղած տարբերությունը սուկ այդ գերնպատակին հասնելու միջոցների զանազանությունն էր:

1908 թ. Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միաձուլումով ստեղծվեց Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը (այսուհետև՝ ՀՍՌԿ), որի քաղաքական հավատամքը դարձան թե՛ համամարդկային (հավասարություն, ազատություն, օրենքի գերակայություն) և թե՛ ազգային (հայ ժողովրդի կյանքի բարելավման ու բարեկեցիկ պայմաններում ապրելու) իրավունքի նվաճմանը միտված սկզբունքները:

Թուրքական մշտակեղծ քաղաքականության պայմաններում ՀՍՌԿ-ն անընդհատ փորձում էր հզորանալ և կազմակերպված հանդես գալ որպես հայության շահերի պաշտպան ու կազմակերպիչ, սակայն միահեծանորեն իշխող օսմանյան բռնապետության օրոք հմտորեն գործող լրտեսական համակարգը և քաղաքական ուժերի անհանդուրժողական կեցվածքը մամլիչի տակ էին պահում կուսակցության թույլ կառույցները, և նա ստիպված գործում էր Հայոց պատրիարքարանի հովանու ներքո:

1912 թ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո հայ իրականության մեջ գործող բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում և ՀՍՌԿ-ը, հետամուտ էին այդ հարցի արդարացի լուծմանը, որն ամրագրվեց կուսակցության ծրագրային փաստաթղթերում, բազմիցս քննարկվեց ընդհանուր պատգամավորական և այլ մակարդակի ժողովներում: ՀՍՌԿ-ը որդեգրել էր արմենական տեսաբան Սեպուհի առաջադրած տեսական դրույթը. այն է՝ Հայկական հարցն առաջացել է պատմականորեն, իսկ արևմտահայությունը երկար ու համբերատար սպասել է դրա լուծմանը, սակայն ապարդյուն, որովհետև սուլթանական կառավարությունն այն զանց է առել: Ուստի հայն «իրաւունք ունէր ապստամբելու: Միայն հարկաւոր էր ոյժ գոյացունել, քանի որ գաղափարական շէնքը իրական հողի վրայ պիտի կառուցանէլ և ոչ թէ օդի մէջ»<sup>2</sup>:

ՀՍՌԿ-ի ծրագիրն Օսմանյան կայսրությունում բնակվող ժողովուրդների գոյության ապահովման երաշխիքներ էր համարում զանազան արտոնությունների վերացումը, թափառաշրջիկ և մակաբույծ ցեղերի զինաթափումն ու նրանց նստակյաց դարձնելը, համիդիե գորագնդերի վերացումը<sup>3</sup>: Ընդգծենք, որ ռամկավար առաջնորդները թուրքական դժնդակ իրականությանը քաջածանոթ արևմտահայեր էին, որոնք ծրագիրը գրելիս, անկասկած, հաշվի էին առել իրենց մտադրությունների իրականացմանը նպաստող կամ արգելակող բոլոր հնարավորություններն ու խոչընդոտները: Գտնվելով իրա-

---

<sup>1</sup> Մինչև XX դարի սկիզբը Հայաստան ասելով նկատի էր առնվում բացառապես Արևմտյան Հայաստանը:

<sup>2</sup> **Ղարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Երևան, 2003, էջ 170:

<sup>3</sup> «ՌԱԿ վավերագրեր», կազմեց դոկտ. Վ. Ղազարեան, Պէրյութ, 1988, էջ 30:

դարձությունների կիզակետում՝ նրանք չէին կարող առաջարկել իրականությունից կտրված ու անիրագործելի ծրագրեր:

1912 թ. ՀՄՌԿ Վասպուրականի շրջանակի «Վան-Տոսպ» պաշտոնաթերթը<sup>1</sup> հաճախ էր անդրադառնում Հայկական հարցին: Չկար թերթի գրեթե մեկ համար, որտեղ անդրադարձներ չլինեին այդ հարցին: Հաշվի առնելով անցյալի դառը փորձը՝ ռամկավարներն ի սկզբանե որոշակի վերապահությամբ էին մոտենում հայկական գավառներում բարենորոգումներ իրականացնելու օսմանյան իշխանությունների խոստումներին: «Վան-Տոսպի» խմբագրականներից մեկում ընդգծվում էր, որ ամեն անգամ, երբ բարենորոգումների հարցը դառնում էր քննարկումների առարկա, թուրքական պաշտոնական շրջանակները հանգստացնում էին ժողովրդին՝ ասելով. «Սպասեցեք քիչ մը, պատերազմը անցնի, անգամ մը ինքզինքնիս գտնենք, յետոյ Ձեր մասին բան մը կընենք անպատճառ»<sup>2</sup>:

Պարբերականի «Հրագրան» կեղծանունով հոդվածագիրը Հայկական հարցի վերաբացումը հայության համար համարում էր վտանգավոր և անսքող ակնարկում, որ 1890-ական թվականներից ի վեր այդ հարցի բուռն քննարկումներին միշտ հաջորդել են հայկական ջարդերը, ուստի մարգարե դառնալու կարիքը չէր զգում գուշակելու համար «արիւնտս դէպքերու մեծ հաւանականութիւնը»<sup>3</sup>: Պարբերականի մեկ այլ համարում թղթակիցը, վկայակոչելով զինվորական վարժարանում թուրք սպաներից մեկի արած՝ «Պատերազմէն յաղթական ելնենք, թե ոչ, գիտենք ինչ դաս պիտի տանք անհատարիմ հայերուն և քիւրտերուն» հայտարարությունը<sup>4</sup>, լրջորեն զգուշացնում էր մոտալուտ վտանգի մասին: Թեև «Վան-Տոսպի» հայտնած այս տեսակետը հեռու չէր ճշմարտությունից, սակայն քանի որ Հայկական հարցը վերաբացվելու էր Ռուսաստանի նախաձեռնությամբ, այդ իսկ պատճառով մեր ազգային շրջանակները շարունակում էին վառ հույսեր փայփայել:

Չափավոր պահանջներով հանդես եկող ռամկավարները դեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ արևմտահայության խաղաղ գոյակցության գաղափարը: Իրականում թուրքական բռնապետության պայմաններում գործող

---

<sup>1</sup> Պարբերականը՝ որպես կիսամսյա գիտական, կրոնական հանդես, լույս է տեսել 1911-1914 թթ. Վանում: 1912 թ. սկսվում է թերթի նոր շրջանը: Այն դառնում է ՀՄՌԿ Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթ, որի խմբագիրն էր նախ Եղան Հակոբյանը, ապա Վարդան Պապիկյանը: Այնուհետև՝ 1915-1918 թթ., որպես Հայ Ռամկավարների պաշտոնական օրգան, այն հրատարակվել է Թիֆլիսում: Պատասխանատու խմբագիրն էր Արտակ Դարբինյանը: 1919 թ. հասարակական, քաղաքական, գրական այդ շաբաթաթերթը, վերանվանվելով «Հայաստանի ձայն», սկսում է լույս տեսնել Երևանում: Տե՛ս Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բաբոյան Ս. Ա., Երևան, 1986, էջ 90:

<sup>2</sup> «Վան-Տոսպ», 1912, թիվ 28:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 1:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 2:

արևմտահայ քաղաքական ուժերի գերակշիռ մասը հարկադրված եղավ սատարել իշխանությանը՝ քարոզելով հայ ազգաբնակչությանը գորավիզ լինել օսմանյան հայրենիքին:

Ռամկավարներն առաջադրում էին Հայկական հարցի լուծման իրենց բանաձևը, որն ամբողջանում էր ի դեմս «Կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիության սրբազան իրաւունքի» պահանջի<sup>1</sup>: ՀՍՌԿ-ի տեսաբանները գտնում էին, որ իրենց պահանջներն օգտակար են ոչ միայն հայերի, այլև նրանց հարևանների համար. «Մենք ապստամբներ չենք և Հայկական հարցը անջատողական շարժում մը չէ եղած երբեք, մեր պահանջները տարրական արդարութեան պահանջներ են, որոնց իրագործումով հաւասարապէս պիտի օգտուին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետութիւնը»<sup>2</sup>:

Ակնդետ հետևելով օրեցօր վտանգավոր դարձող զարգացումներին և խոսքն ուղղելով իշխանություններին՝ ռամկավարներն անհրաժեշտ էին համարում հաճախակի կրկնել. «Մի անգամ ընդմիջտ կը հայտարարենք, լավ մտիկ ըրեք, հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ», թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան «հայ ցեղի ինքնուրույն կուլտուրական զարգացումը նորոգուած ու բարեկարգ օսմանյան պետութեան մէջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը»<sup>3</sup>:

Ընդհանրապէս, ամեն անգամ, երբ միջազգային ասպարեզում սասանվում էին Օսմանյան կայսրության դիրքերը, արևմտահայության մեջ վերստին արթնանում էին օսմանյան լծից ազատագրվելու հույսերը: Նման իրավիճակ առաջացավ նաև 1911 թ.՝ թուրք-իտալական և այնուհետև Բալկանյան պատերազմների ժամանակ: Այդ հույսերը իսպառ վերացնելու նպատակով օսմանյան իշխանությունները Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լի մուսուլմաններին բնակեցնում էին հայկական վիլայեթներում՝ սրելով առանց այն էլ վաղուց ի վեր այնտեղ գոյություն ունեցող հակամարտությունները: Բացի դրանից, պատերազմներում կրած պարտության մեղքերն իշխանություններն սկսեցին բարդել հայ բնակչության վրա, ինչն ավելի էր շիկացնում լարված իրավիճակը: Այդ ընդգծված հակահայկական մթնոլորտը խիստ անհանգստացնում էր ՀՍՌԿ-ին ու ստիպում նրան փրկության միջոցներ որոնել:

Այդ ժամանակաշրջանում առաջացել էին Հայկական հարցի վերաբացման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները.

ա) Բալկանյան պատերազմում Թուրքիան պարտվել էր,

---

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 4:

<sup>2</sup> Նույն տեղում, 1913, թիվ 1:

<sup>3</sup> Նույն տեղում, թիվ 2:

բ) մեծ տերությունները լրջորեն հետաքրքրված էին այդ պատերազմի արդյունքներով,

գ) ռուսական դիվանագիտությունն ընդգծված բարյացակամ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի նկատմամբ:

Այս պայմաններում Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն 1912 թ. հոկտեմբերի 15-ին, ապա դեկտեմբերի 24-ին դիմեց ռուսական իշխանություններին՝ Լոնդոնում գումարված դեսպանաժողովում Հայկական հարցը պաշտպանելու խնդրանքով, իսկ նոյեմբերի 10-ին Պողոս Նուբարին հատուկ կոնդակով լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հարցը: Այդ ժամանակից սկսած՝ Պողոս Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունը գտնվում էր Փարիզում և արտահայտում հայ ժողովրդի հավաքական շահերը:

1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀՄՌԿ Բ ընդհանուր պատգամավորական ժողովը: Համագումարում ի գիտություն ընդունվեց այն իրողությունը, որ 1912 թ.՝ Հայկական հարցի վերաբացումից հետո, միջազգային տարբեր աստիճաններում արևմտահայության շահերը ներկայացնում էր կաթողիկոսի ներկայացուցիչ Պողոս Նուբարի Ազգային պատվիրակությունը, որի գործունեությունը որոշակի հույսեր էր ներշնչում, սակայն մեծ տերությունների մրցակցությունը կարող էր ավելի վատթարացնել հայերի կացությունը<sup>1</sup>: Ելնելով դրանից՝ իրատես ռամկավարները որոշեցին կոչ անել բոլորին առավել զգույշ լինել: Երկար քննարկումների արդյունքում ընդունվեցին կարևոր որոշումներ.

ա) սպասել Հայկական հարցի վերաբերյալ մեծ տերությունների մոտալուտ՝ հաշտության վեհաժողովի որոշումներին,

բ) մինչ այդ «Արևելեան նահանգներում զարկ տալ ինքնապաշտպանութեան գործին»<sup>2</sup>,

գ) հայաշատ երկրներում ձեռնարկել բացատրական աշխատանքներ, լուսաբանել պահի լրջությունը, ներկա փուլում Հայկական հարցի առանձնահատկությունները և օրախնդիր շատ այլ հարցերի վերաբերյալ ՀՄՌԿ-ի տեսակետները:

Կուսակցության մեկ այլ պաշտոնական օրգան «Ազգը» նշում էր, որ քանի դեռ հայ ժողովուրդն իր սեփական ճակատագրի դեկը չի վերցրել իր ձեռքը և ամբողջ ուժը չի կենտրոնացրել դրա շուրջ, «Հայկական հարցը ամեն ատեն տառապանքի, արիւնի և աւերի գնով երևան պիտի գայ պետութեանց մասնաւոր շահերուն ծառայելու համար: Պէտք է մեկընդմիջտ իմանանք, որ մարդկային ու ազգային բոլոր իրաւունքները հիմնուած են շահի վրայ ու զանոնք ձեռք ձգելու համար սեփական ուժն է միակ դարմանն ու միջոցը, ուժ

<sup>1</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 231:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 235:

խելքի, ուժ՝ սրտի, ուժ՝ շրջահայեցութեան, ուժ՝ բազուկի ու զէնքի»<sup>1</sup>: Միաժամանակ, խմբագրականում չէր անտեսվում արտաքին օգնության կամ դիվանագիտական աջակցության կարևոր դերակատարությունը:

Ռամկավարները սկզբում դրական վերաբերմունք ցուցաբերեցին 1914 թ. հունվարի 26-ին ընդունված հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագրին<sup>2</sup>՝ այն բնութագրելով որպես «հաջող վերջավորություն»: Նրանք գրում էին, թե հայ ժողովուրդն «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի յոյսով ու վստահութեամբ նայիլ ապագային...»<sup>3</sup>: Բայց հետո թերահավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ, իսկ այնուհետև չցանկանալով վատատես լինել, այնուամենայնիվ գերադասեցին գրավել չեզոք դիրքորոշում: «Չենք կրնար գուշակել, – գրում էին նրանք «Ազգում» մարտի 18-ին, – թե ապագայ պիտի ունենա, որչափ տոկուն ու տևական պիտի ըլլա ծրագիրը, բայց պետք է որ առանց հոռետեսութեան քիչ մը յոյսով նայինք անոր վրա և մեր կողմէ աշխատինք դյուրացնել անոր գործադրութիւնը»<sup>4</sup>:

ՀՄՌԿ-ի որոշումներն ու որակումներն ակնհայտորեն անորոշ էին ու հեղեղուկ, քանի որ ռամկավարները փնտրտուքի մեջ էին և Հայկական հարցի լուծումը կամ հայկական նահանգներում բարենորոգումների իրականացումը կապում էին միաժամանակ թե՛ մեծ տերությունների, թե՛ իրօթի-հաղական կառավարության և թե՛ արևմտահայ հասարակական-քաղաքական ուժերի հետ:

Ռամկավարները հանդես եկան հայտարարությամբ, որտեղ Օսմանյան սահմանադրությանը հաջորդած տարիները բնորոշեցին իբրև արևմտահայության համար ազգային հուսախաբության ժամանակաշրջան, որի գագաթնակետը համարեցին 1909 թ. կիլիկիահայության կոտորածները: ՀՄՌԿ-ը խիստ կարևորում էր ինքնապաշտպանության կազմակերպումը, որը, սակայն, նրա անդամների կարծիքով, թերի էր<sup>5</sup>: Համենայն դեպս ակնհայտ էր, որ ռամկավարներից շատերը, մասնավորապես նրանց արմենական հատվածը, արևմտահայության ազատագրության հույսը շարունակում էր կապել Ռուսաստանի հետ:

Արևմտահայ իրականության մեջ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ի նպաստ Հայկական հարցի ծավալվեց շարժում բոլոր ուժերի համախմբման համար: Պատրիարքարանը դատապարտում էր միջկուսակցական պայքարը<sup>6</sup>, «Մշակը» ողջունում էր համախմբման գաղափար

---

<sup>1</sup> «Ազգ», 1914, թիվ 31:

<sup>2</sup> Տե՛ս բնագիրը՝ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 339-342:

<sup>3</sup> «Ազգ», 1914, թիվ 37:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 39:

<sup>5</sup> Տե՛ս **Տեփոյեան Պ.**, Ատոմ Ապլանեան, Պէյրուժ, 1988, էջ 129:

<sup>6</sup> «Արարատ», 1914, թիվ 6:

րը<sup>1</sup>, «Արևելք», ողջունելով շարժումը, հայտարարում էր, որ այն ուժ կհաղորդի «կուսակցությունների յարատեւմանը եւ հզօրացմանը»<sup>2</sup>: Շարժմանը դրականորեն արձագանքեցին ՀՅԴ-ը, Վերակազմյալները, ՀՍՌԿ-ը: Սակայն վերջինս ավելի հրատապ էր համարում ինքնապաշտպանության խնդիրը, որովհետև մտավախություն ուներ, որ ինչպես 1894-1896 թթ., հայկական բարենորոգումների վերաբերյալ համաձայնագրերը կարող էին հանգեցնել «միեւնոյն արինոտ արդիւնքին»<sup>3</sup>: Համախմբման այդ կոչերն ավարտվեցին ազգային բոլոր կուսակցությունների համերաշխությանն առնչվող հայտարարություններով՝ հատկապես բարենորոգումների իրականացման հարցում: Սակայն իրականում նրանք այնքան համերաշխ ու միասնական չէին, որքան ցանկալի կլինէր:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիները փոթորկալից եղան հայ ժողովրդի կյանքում: Տասնամյակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական շրջանակները, արևմտահայության բախտը կապելով Թուրքիայի դեմ մեծ տերությունների տարած հաղթանակի հետ, գտնում էին, որ պատմությունն իր արդար խոսքը կասի, և հայերը կազատագրվեն օսմանյան տիրապետությունից: Բայց ստեղծված իրավիճակը նրանց ստիպում էր ընտրել տարբեր մարտավարություններ:

Գիտակցելով, որ 1914 թ. օգոստոսի 1-ին սկսված աշխարհամարտը կարող է թուրքերի համար հայերի հետ հաշվեհարդար տեսնելու պատեհ առիթ դառնալ, ՀՍՌԿ-ը ռուս-թուրքական պատերազմի սահմանում ռազմական գործողությունների սանձազերծումից հետո նախ կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և կոչեց հայերին կատարել իրենց զիվորական պարտքը: «Հրաժարիլ ընդմիշտ, – գրում էր «Վան-Տոսպը», – պատերազմի միջոցին, ներքին վրդովիչ քաղաքականութենէ, այս կտովորեցնէ հայերուն ներկայ պատերազմի ընթացքին եվրոպական տերութիւններու որդեգրած ուղղութիւնը»<sup>4</sup>:

1915 թ. գարնանը ՀՍՌԿ-ի ղեկավարությունը տեղափոխվեց ու հաստատվեց Թիֆլիսում, իսկ 1915 թ. աշնանը ձեռնամուխ եղավ «Վան-Տոսպի» վերահրատարակությանը: Բախվելով երիտթուրքերի կողմից անպաշտպան արևմտահայության բնաջնջմանը՝ կուսակցությունը փոխեց Հայկական հարցի լուծման ուղիների ընտրության շուրջ իր տեսակետները:

1915 թ. մայիսի 20-ին, երբ ընդլայնվում էին պատերազմական գործողությունների թատերաբեմերը, ՀՍՌԿ-ը և Սոցիալ-դեմոկրատական հնչակյաններն Ալեքսանդրիայում կնքեցին համաձայնագիր<sup>5</sup>, որում նշված էր. «Երկու

<sup>1</sup> «Մշակ», 1913, թիվ 254:

<sup>2</sup> «Արևելք», 1914, թիվ 722:

<sup>3</sup> «Ազգ», 1914, թիվ 38:

<sup>4</sup> «Վան-Տոսպ», 1914, թիվ 43:

<sup>5</sup> Տե՛ս **Լազեան Գ.**, Հայաստան և հայ դատը, Երևան, 1991, էջ 198: Տե՛ս նաև «Զարթոնք» (Պէրյութ), 1950, թիվ 261:

կողմերու մոտավոր նպատակն է ինքնավար Հայաստան և Կիլիկիա»<sup>1</sup>: Այն պետք է դրվեր Անտանտի կամ Ռուսաստանի հովանու (protectorat) ներքո: Այսինքն՝ նախատեսվում էր Հայաստանի ինքնավարության ստեղծում Ռուսաստանի կազմում: Համաձայնող կողմերը պատրաստվում էին զորակցել Պողոս Նուբարի պատվիրակությանը, իսկ նա ապագա միջազգային վեհաժողովում որպես հայկական պատվիրակության լիազոր ներկայացուցիչների՝ առաջարկելու էր երկու կողմերի թեկնածուներին<sup>2</sup>:

«Հայկական հարցի շուրջ» վերլուծական հոդվածում ՀՄՌԿ-ի տեսաբաններից Վարդան Պապիկյանը, արտահայտելով իր կուսակցության տեսակետը, հետադարձ հայացք էր նետում Հայկական հարցի անցած ուղու վրա և փորձում այն վերաիմաստավորել: Հեղինակը միանշանակորեն չէր վերաբերվում եվրոպական դիվանագիտության դերին հայկական խնդրում: Նա չէր արդարացնում և չէր դատապարտում նրա միջամտությունը Հայկական հարցում, այլ ամեն ինչ ընկալում էր տեղի ու ժամանակի համատեքստում: «Կարելի է քննադատել օտար դիվանագիտութեանը դիմելու հայերի քայլը» հարցին Պապիկյանը պատասխանում էր, որ մինչ եղեռնը հայ ժողովուրդը չէր կարող գուշակել ապագան: «Չէ՞ որ ժողովուրդներն ալ ունեն իրենց անփորձութեան շրջանները, որոնց մէջ նրանց գործած արարքները կարելի չէ չափել հետագա տարիների չափով»<sup>3</sup>, – գրում է հեղինակը և ավելացնում, որ Եվրոպան չի փրկելու իրենց, բայց «նրա սարսափն էր միայն, որ արգելում էր թուրքին մահացու վերջին հարուածը հասցնելու հայ ժողովրդի գլխին»<sup>4</sup>:

Հեղինակի կարծիքով, կոտորածները տեղի էին ունենալու անկախ հայերի պահվածքից, պարզապես նա գտնում էր, որ «մեր պարտքն էր առավել զգոն լինել, որը չեղավ»<sup>5</sup>: Այդուհանդերձ հարկ է նկատել, որ իրենց քննադատության մեջ ռամկավարները մոռանում էին, որ հայության ճակատագիրը տնօրինում էին ոչ թե հայերն ու նրանց կուսակցությունները, այլ իրենց քաղաքական շահախնդրություններով առաջնորդվող մեծ տերությունները:

Ռամկավարներին մտահոգում էր Թուրքիայի ապագա կառուցվածքը, որից անմիջականորեն կախված էր արևմտահայության ճակատագիրը: ՀՄՌԿ տեսաբան Միհրան Տամատյանը 1916 թ. «Արեւ» թերթում այս հիմնահարցին է նվիրել «Ասիական Թուրքիո ապագան» հոդվածաշարը<sup>6</sup>: Նա գտնում էր, որ կառուցվածքային առումով այս հարցի լուծման լավագույն տարբերակը Թուրքիայի վերածումն էր Շվեյցարիայի տիպի պետության: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ թուրքերն անկարող են հանդուրժելի

<sup>1</sup> «Վան-Տոպ», 1914, թիվ 43:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, 1916, թիվ 14:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Հոդվածաշարը լույս է տեսել թերթի 1916 օգոստոսի 4-ի, 7-ի և հոկտեմբերի 16-ի համարներում:



պայմաններ ստեղծել հպատակ ժողովուրդների համար: Ուստի թեև Տամատյանը փաստում էր, որ եվրոպական պետությունների միջև կային լուրջ հակասություններ, այդուհանդերձ անհրաժեշտ էր համարում եվրոպական կառավարիչների նշանակումը Թուրքիայում<sup>1</sup>:

Սույն հոդվածաշարում Տամատյանը քննարկման առարկա էր դարձնում նաև արևմտահայության քաղաքական կողմնորոշման հարցը, մատնանշում, որ, անկախ ամեն ինչից, հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի կողմն էր<sup>2</sup>:

«Վան-Տոսպը» ևս շեշտում էր, որ արևմտահայությունն իր ազատագրության հույսը կապել էր Ռուսաստանի հետ. «Թուրքահայերը դեպի Ռուսաստան ունեցել են դարավոր անայլալ համակրանք և իրենց ակնկալութիւններն իրականացած տեսնելու հավանականութիւնը փնտրում են Ռուսաստանի մոտ»<sup>3</sup>:

Որպես հավատարմության գրավական «Վան-Տոսպը» զգուշացնում էր հայերի երկարամյա դաշնակից Ռուսաստանին գրավյալ տարածքներում մնացած քրդերի մասին: Նա նրանց համեմատում էր «ծոցում պահված օձերի» հետ, որոնք, ձևականորեն հայտնելով իրենց հնազանդությունը Ռուսաստանին, հարմար պահին, սակայն, «նամարդ բորենու նման հարձակվում են երեկվա իր կյանքը բաշխողի վրա, հոշոտում» նրան, կողոպտում, ջարդում առանց խնայելու և «ավելի մեծ վտանգ էին դառնում բանակի համար, քան թե առջևի թշնամին»<sup>4</sup>:

1916 թ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր, որ պատերազմում հաղթանակի դեպքում Օսմանյան կայսրությունը տրոհվելու էր, և դրա մասը կազմող Կիլիկիան ընդգրկվելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտում: Ֆրանսիան իր գաղութատիրական նկրտումները քողարկում էր տեղի հայերին ինքնավարություն շնորհելու խոստումով և, ընդառաջելով Պողոս Նուբարի առաջարկին, 1916 թ. նոյեմբերի 28-ին որոշեց Կիպրոսում կազմավորել հայ տարագիրներից բաղկացած «Արևելյան լեզեռն» զորաջոկատը<sup>5</sup>:

Ողջունելով «Արևելյան լեզեռնի» ստեղծման գաղափարը՝ ՀՍՌԿ-ը Եգիպտոսի հայկական կուսակցությունների հետ մեկտեղ ձևավորում է «Հայ ազգային միութիւնը», որի նպատակն էր գորավիզ լինել ֆրանսիական կառավարության վերոհիշյալ նախաձեռնությանը: 1917 թ. մարտի 16-ից 26-ը

---

<sup>1</sup> «Արեւ», 1916, թիվ 23:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 62:

<sup>3</sup> «Վան-Տոսպ», 1916, թիվ 24:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 19:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս **Պեյերյան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում: Աշխատասիրությամբ՝ Արթուր Պեյերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, հ. 1, էջ 376-391:

ԱՄՆ-ի չորս հայկական կուսակցությունները՝ ՀՍՌԿ-ն, ՀՅԴ-ն, ՍԴՀ-ն և Վերակազմյալ հնչակյանը, ևս բանակցում են և կազմում «Ամերիկայի հայ ազգային միություն»-ը, որն ԱՄՆ-ում դառնում է Ազգային պատվիրակության ներկայացուցիչ մարմինը:

\* \* \*

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո «Վան-Տոսպը» սատարում էր գաղթականների համագումար հրավիրելու կոչը<sup>1</sup>: Ռամկավարներն ակտիվ մասնակցություն ունեցան 1917 թ. մայիսին Երևանում գումարված Արևմտահայ առաջին համագումարի աշխատանքներին: 1917 թ. ապրիլի 24-ին Թիֆլիսում կայացավ Սահմանադրական ռամկավար կուսակցության Կովկասի և ռուսական գործերի կողմից Օսմանյան կայսրության գրաված վայրերի շրջանային պատգամավորական ժողովը<sup>2</sup>, որի մասնակիցները երկար քննարկումներից հետո որոշում են այդուհետ հրաժարվել եվրոպական տերությունների օգնությանն ապավինելու գաղափարից և Հայաստանի ապագայի հարցում հույսեր կապել միայն ժողովրդավարական Ռուսաստանի հետ: Ուստի հեռագիր են ուղարկում իշխան Լվովի Ժամանակավոր կառավարությանը, որտեղ նշված էր. «Վստահ լինելով, որ մեր դժբախտ Հայաստանի ապագան կախուած է ռուսական հեղափոխութեան բարեհաջող վիճակից, մենք գորակցում ենք Ձեզ»<sup>3</sup>: ՀՍՌԿ-ը պաշտպանում էր ապագա ժողովրդավարական Հայաստանի գաղափարը և մերժում դասակարգային պայքարը, ինչը դարձել է այս կուսակցությունը «հետադիմական» և «պահպանողական» բնութագրելու պատճառ: Ռամկավարները սոսկում էին հատկապես ռուսական բանակի քայքայումից: Նրանց համար անընդունելի էր, որ «գործի մի մասը թողած իր կարևոր գործը վերադառնում է գյուղերը, որ մասնակցի հողի բաժանմանը... հրապուրվում է բոլշևիկների կոչերով, պատրաստ է տապալելու ազատամիտ միասնությունը և ստեղծելու սոցիալիստական կարգեր»<sup>4</sup>:

Մեր օրերի բարձունքից փաստերի համադրումը և թռուցիկ վերլուծությունն իսկ ցույց են տալիս, որ չնայած մի շարք հարցերում ռամկավարների ակնհայտ պահպանողականությանը՝ այդուհանդերձ Հայկական հարցի լուծման առնչությամբ նրանք գրավել էին ճիշտ դիրքորոշում: Պատկերացնենք մի պահ, թե ինչ կարող էր լինել, եթե Ռուսաստանը պատերազմից դուրս գար առանց հոկտեմբերյան հեղաշրջման...

1917 թ. հուլիսի 1-ից 4-ը Բոստոնում տեղի ունեցավ ՀՍՌ կուսակցության ԱՄՆ-ի շրջանակի ԺԴ պատգամավորական ժողովը, որը բարձր է գնահա-

---

<sup>1</sup> «Վան-Տոսպ», 1917, թիվ 28:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 27:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, թիվ 32:

տում Ազգային միության գաղափարը, դրա նպատակներն ու գործունեությունը, և փաստում, որ դրանք ամբողջությամբ համապատասխանում են կուսակցության սկզբունքներին ու ազգային համերաշխության բաղձանքին: Ժողովը որոշում է, որ ՀՍՌ կուսակցության բոլոր ակումբները պետք է սատարեն Հայ ազգային միությանը:

Ռամկավարները խիստ մտահոգված էին 1917 թ. բռնկված ռուսական փետրվարյան հեղափոխությամբ, հատկապես այն հարցով, թե ինչպես էր այն անդրադառնալու Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող փոքր ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի վրա<sup>1</sup>:

ՀՍՌԿ-ը ողջունեց 1917 թ. մարտի 16-ին հիմնադրված Հայ ժողովրդական կուսակցությանը<sup>2</sup> և հույս հայտնեց, որ «զուտ թուրքահայկական հարցով զբաղուող ՀՍՌ կուսակցությունը կկարողանայ համագործակցել նրա հետ»<sup>3</sup>: Ռամկավարները հայտարարում էին, որ միջազգային դիվանագիտության խնդիր հանդիսացող Հայկական հարցը կարող էր լուծում ստանալ միայն միջազգային վեհաժողովում, իսկ իրենք պետք է աշխատեին, որ դրան լուծում տրվեր «ըստ թուրքահայերի ցանկութեան»<sup>4</sup>: Ապրիլի 24-ին իշխան Լվովին հղած նրանց հեռագրում մասնավորապես նշվում էր, որ Հայաստանի ապագա բախտը կախված է ռուսական հեղափոխության ելքից, իսկ ՀՍՌԿ-ն իր աջակցությունն ու գորակցությունն է հայտնում «վերածնվող Ռուսաստանի ամրապնդման բոլոր կողմնակիցներին»<sup>5</sup>:

\* \* \*

1917 թ. հոկտեմբերի 25-ին իշխանությունը զավթած բոլշևիկները սկսեցին անջատ բանակցություններ վարել Գերմանիայի հետ և 1918 թ. մարտի 3-ին կնքեցին Բրեստի պայմանագիրը, որով թուրքերը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը, նաև Կարսի ու Բաթումի տարածաշրջանները: Ռամկավարներին լրջորեն անհանգստացնում էին հատկապես բոլշևիկների հակապատերազմական կոչերը, որոնք, փաստորեն, հանգեցնում էին բանակի քայքայմանը<sup>6</sup>: 1918 թ. գարնանը թուրքական բանակի արշավանքի և Արևմտյան Հայաստանի վերագրավման հետևանքով Հայոց ազգային խորհրդի գործունեությունը կազմալուծվել էր: Այդ իսկ պատճառով ռամկավարներն իրենց մամուլի էջերում շարունակում էին քննադատել բոլշևիկներին:

«Ազգը» դատապարտում էր թե՛ արևմտյան և թե՛ Կովկասյան ռազմաճակատներում ռուսական զորքերի կազմալուծմանն ուղղված բոլշևիկների քարոզչությունը, «իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վե-

<sup>1</sup> «Ազգ», 1917, թիվ 42:

<sup>2</sup> Ղազարեան Վ., Համառոտ պատմություն ՌԱԿ-ի, Պէրյուժ, 1978, էջ 43:

<sup>3</sup> «Վան-Տոսպ», 12-ը մարտի 1917:

<sup>4</sup> Ղազարեան Վ., նշվ. աշխ., էջ 45:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> «Ազգ», 1917, թիվ 51:

րածելու» նրանց առաջադրած սկզբունքը, ինչպես նաև Ռուսաստանի քաղաքական ուժերի կողմից «հուղայական խաղաղութիւն» անվանված 1918 թ. ռուս-գերմանական Բրեստի պայմանագիրը, որով նրանք Գերմանիային հանձնեցին ոչ միայն ռուսական հողերի զգալի մասը, այլև հայ ժողովրդին: Ըստ այդմ ռամկավարները կարծիք էին հայտնում, որ «պետք չիկա ըսելու, թե ինչ պիտի պատահի հայ ժողովրդին: Տարակույս չիկա, որ հայ ազգի բեկորներն ալ սուրե պիտի անցուին»<sup>1</sup>:

1918 թ.՝ Մուղրոսի զինադադարից հետո, ՀՄՌԿ պաշտոնաթերթ «Նոր Կեանք», նկարագրելով Թուրքիայի կենտրոնական շրջաններում Մուստաֆա Քեմալի գլխավորած թուրք ազգայնականների խժոժությունները, թուրքերին դատապարտում էր այն բանի համար, որ նրանց «չարագործությունները նորութիւն չեն»<sup>2</sup>: «Նոր Կեանքի» շանթերը չէին շրջանցում դաշնակիցներին, որոնք իրենց «հոռի ընթացքով ուղղակի կամ անուղղակի քաջալերեցին զայն ու կքաջալերեն տակավին»<sup>3</sup>: Թերթը զայրույթով գրում էր, որ ամեն ինչ մնում է նույն հարթության վրա, և, ինչն ամենասարսափելին է, հրաշքով փրկված հայության բեկորները դրվում են պատմության զոհասեղանին, և զգոնության կոչ էր անում «հայոց բոլոր մարդերուն»<sup>4</sup>:

1919 թ. մարտի 24-ին ռամկավարները Երևանում սկսում են վերահրատարակել կուսակցության՝ «Հայաստանի Ձայն»-ի անվանափոխված «Վան-Տոսպ» պաշտոնաթերթը, որի նպատակն էր պաշտպանել Միացյալ Հայաստանի «խարխիւր»: Այն կոչ էր անում ընդունել Արևմտյան Հայաստանի թեզը, որպէսզի «Ռուսաստանը և ռուսական հարցը պատճառ չդառնան դաշնակից պետութիւններուն քով թրքահայ հարցին լուծումը հետաձգելուն»<sup>5</sup>:

Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան 1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների հետ կնքված Մուղրոսի զինադադարով կապիտուլյացիայի ենթարկվեց: 1919 թ. հունվարին տեղի ունենալիք Փարիզի խաղաղության վեհաժողովում հայ ժողովրդի միասնական կամքն արտահայտելու և քաղաքական շահերը պաշտպանելու նպատակով՝ Ազգային պատվիրակությունը ծրագրում է Փարիզում հրավիրել Ազգային համագումար և այդ մասին հրապարակում է «Ամբողջական Հայաստանի՝ Կիլիկիայի հետ միասին, անկախութեան մասին» հայտարարությունը, որում նշվում էր, որ Հայաստանի անկախությունը պատկերացվում էր «համաձայնական պետութիւններու և Միացյալ Նահանգներու հովանավորութեան տակ կամ Ազգերու Դաշնակցութեան, երբ ան կազմվի»<sup>6</sup>: ՀՄՌԿ-ը համագումարին մասնակցեց մի քանի պատգամավորներով. Եգիպտոսից ընտրվեց Վահան Թեքեյա-

<sup>1</sup> «Նոր կեանք», 1917, թիվ 38:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 97:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, 1919, թիվ 62:

<sup>5</sup> «Հայաստանի Ձայն», 1919, թիվ 44:

<sup>6</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, Երևան, 1993, էջ 283:

նը, Կ. Պուլսից՝ պրոֆեսոր Գ. Տեր-Հակոբյանը<sup>1</sup>, ԱՄՆ-ից ընտրվեցին՝ Հովհաննես Խան Մասեհյանը, պրոֆեսոր Կարապետ Թումայանը, Երվանդ Ադաթոն բեյը, Միհրան Տամատյանը:

Նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը կամ, ինչպես անվանում էին, «Արարատյան Հանրապետությունը», որը «պատերազմի պարագայական քաղաքականության հետևանք է, որը չէ կարող իրավասություն ունենալ և նույնանալ թուրքահայ հարցին հետ»<sup>2</sup>, նրանք համարում էին անցումային փուլ հայոց պետականության ստեղծման ճանապարհին, քանի որ այն չէր ներառում Հայաստանի մեծագույն մասը: Նրանք եզրակացնում էին, որ այդպիսի հանրապետությունն իրավասու չէ առանձին պատվիրակություն ստեղծելու և իր անունից բարձրացնելու ու միջազգային դիվանագիտական ատյաններում պաշտպանելու Հայկական հարցը: Ռամկավարները մինևույն ժամանակ գտնում էին, որ նորաստեղծ հանրապետությունը, գտնվելով Ռուսաստանի ազդեցության ոլորտում, վաղ թե ուշ գրավվելու էր նրա կողմից, հետևաբար այն չէր կարող համարվել ապագա Միացյալ և Ազատ Հայաստանի կորիզը: Առաջնորդվելով այս մտայնությամբ՝ ռամկավարները պաշտպանում էին Պողոս Նուբարի պատվիրակությանը, հրահանգներ տալիս և զինում նրան անհրաժեշտ փաստաթղթերով:

Հարկ է, սակայն, արձանագրել, որ ռամկավարների դատողությունները չի կարելի միանշանակորեն իրատեսական համարել: Ինչպես իրավագիտորեն գրում է այդ հարցերին քաջատեղյակ ակադեմիկոս Գալուստ Գալոյանը, ռամկավարները, աներկբայորեն պաշտպանելով Պողոս Նուբարին և նրա պատվիրակության տեսակետները, հանդես էին բերում հատվածական մտածողություն, որը չէր նպաստում նրա և Հայաստանի Հանրապետության պատվիրակության առաքելությունների իրականացմանը<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը ելնում էր այն տեսլականից, որ Հանրապետության գոյությունն իրողություն էր, այնտեղ ապրում էր մեկ միլիոն ժողովուրդ, Երևանում կար խորհրդարան, կառավարություն, բանակ, մինչդեռ Արևմտյան Հայաստանն ամայի էր, գրեթե անմարդաբնակ: «Հետևաբար անհրաժեշտ էր ազգային բոլոր ուժերը կենտրոնացնել Հայաստանի Հանրապետության վրա, իբրև հայկական պետության կորիզի, և Հայկական հարցի լուծումը դնել Հայաստանի երկու հատվածների միացման ձևով»<sup>4</sup>, - եզրակացնում է Գ. Գալոյանը:

1919 թ. ապրիլի 2-ին կազմվում է «Ամբողջական Հայաստանի պատվիրակությունը», որը Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունն էր:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 284:

<sup>2</sup> **Ճիզմեճեան Մ. Գ.**, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանց, 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 390:

<sup>3</sup> **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 90:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 289:

րակության հետ մեկտեղ ամբողջ հայության անունից պետք է բանակցեր դաշնակից պետությունների պատվիրակությունների հետ մինչև Ամբողջական Հայաստանի միացյալ կառավարության կազմավորումը: 1919 թ. փետրվարի 12-ին Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների կողմից մշակվել ու հաշտության վեհաժողովին էր ներկայացվել մի հուշագիր, որը պարունակում էր բոլոր հայերի պահանջները:

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրապարակեց «Միացյալ և Անկախ Հայաստանի» հայտարարությունը, որը միանշանակորեն չընդունվեց ազգային բոլոր կուսակցությունների և ուժերի կողմից: Անդրադառնալով այս փաստաթղթին՝ «Նոր կեանքը» մանրամասնում էր, որ «Ամբողջական Հայաստանի» անունից խոսելու իրավունք ունի միայն Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից հաստատված և դաշնակից պետությունների կողմից ճանաչված Ազգային պատվիրակությունը: Մինչև նույն ժամանակ, ըստ պարբերականի՝ քանի դեռ Մեծ Հայքի ու Կիլիկիայի վիճակն անկայուն էր և քաղաքականապես անորոշ, նույնիսկ հստակ չէր, թե ինչ էր սպասվում ապագայում, ուստի «Ամբողջական Հայաստանի» կառավարություն կազմելն աննպատակահարմար էր: Բացի դրանից, Միացյալ Հայաստանի կազմավորումը կախված էր նաև հովանավոր պետության որդեգրած դիրքորոշումից, իսկ թե որն էր լինելու այդ պետությունը, դեռևս անհայտ էր: Հայտնի չէին նաև ապագա Հայաստանի սահմանները: Ահա այս պատճառաբանությամբ ԱՄՆ-ի ռամկավարները «Երևանի կառավարությունը հայտարարութիւնը համարում էին անհիմք և արժեզուրկ»<sup>1</sup>: Նրանք հայտնում էին նաև իրենց վերաբերմունքը հայ-ռուս-թուրքական հարաբերությունների առնչությամբ: «Պետք է միանգամ ընդմիջտ խոստովանել, թե մենք թշնամի ենք միայն ցարական Ռուսիո բռնապետական վարչութեան, բայց միջտ բարեկամ եղած ենք ազատական ռուս վարիչներու ծրագրին ու գործունեութեան»<sup>2</sup>, - գրում էր «Նոր կեանքը» և երագում տեսնել Հայաստանին սահմանակից բարգավաճ և հզոր Ռուսաստան, որը «միջտ թշնամի եղած է մեր դահիճ թուրքերու հայահալած քաղաքականութեան»<sup>3</sup>:

Հստակ է, որ ռամկավարները ցանկալին ընդունում էին իբրև իրականություն, որովհետև ռուս-թուրքական հակամարտությունների պատճառը բնավ պայմանավորված չի եղել թուրքերի հայահալած քաղաքականությամբ: Դրանք ունեցել են օբյեկտիվ պատճառներ՝ պայմանավորված Ռուսաստանի և Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական շահերով: Ռամկավարների այս անիրատեսական պատկերացումից էր բխում նրանց այն հույսը, թե ժողովրդավարական Ռուսաստանի կառավարողներն ի վերջո կգնահատեն իրենց երկրի հանդեպ հայերի նվիրվածությունը և ոչ միայն

<sup>1</sup> «Նոր կեանք», 1919, թիվ 27:

<sup>2</sup> Նույն տեղում, թիվ 15:

<sup>3</sup> Նույն տեղում:

չեն արգելի, այլ նույնիսկ կատարեն Միացյալ Հայաստանի կազմավորմանը: Իսկ Թուրքիայի կողմից նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ճանաչման կապակցությամբ ռամկավարները հայտարարում էին, որ հավատ չեն ընծայում այդ խորամանկ ու կեղծ քայլին, ընդհակառակը, գտնում էին, որ իրականում Թուրքիան դեմ է ցանկացած հայկական պետության կազմավորմանը, պարզապես «Արարատեան Հանրապետութեան հռչակումն ընդունել են իբրև փոքրագոյն չարիք»<sup>1</sup>՝ առաջնորդվելով այն մտայնությամբ, որ այդ «սահմանափակ հողամասը թաթարների, վրացիների ու մանավանդ ռուսների մրցակցութեան ընդմեջ, բոլորովին անընդունակ է բարգավաճ երկիր մը լինելու և ազատ ծովերէ գուրկ այդ երկիրը ուշ կամ կանուխ ենթակա է թուրք, թաթար կամ բռնապետական ռուս կառավարութեան ճանկին մեջ իյնալու»<sup>2</sup>:

Փաստորեն ռամկավարների մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ Հայաստանի Հանրապետությունն այդ սահմանների մեջ չէր կարող հեռանկար ունենալ և դատապարտված էր նշված երկրներից որևէ մեկի կողմից կլանվելու: Այդ իսկ պատճառով նրանք Արարատյան հանրապետությունը դիտում էին որպես ապագա Միացյալ Հայաստանի միայն մի մասը, որը, նրանց համոզմամբ, պետք է բաղկացած լիներ նաև Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից ու ելք ունենար դեպի ծով:

1920 թ. հունվարի 19-ին դաշնակիցների գերագույն խորհուրդը փաստացի ճանաչում է Հայաստանի Հանրապետության գոյությունը: Այս հանգամանքը մեծացնում է Հայաստանի Հանրապետության կշիռը քաղաքական ասպարեզում:

Ռամկավարներն այս ժամանակաշրջանում շատ ջանքեր գործադրեցին, որպեսզի ԱՄՆ-ի սենատն ընդունի Հայաստանի մանդատը, սակայն նրանց այդ ցանկությունը չիրականացավ: 1920 թ. մայիսի վերջերին ԱՄՆ-ի սենատը քննարկեց այդ հարցը և այն մերժեց ձայների՝ 23 կողմ, 52 դեմ հարաբերակցությամբ<sup>3</sup>: Դրանում ռամկավարները մեղադրեցին Հայաստանի Հանրապետության կառավարությանը և հրաժարվեցին մասնակցել 1920 թ. մայիսի 28-ի տոնակատարություններին<sup>4</sup>:

1920 թ. սեպտեմբերի 26-ից դեկտեմբերի 3-ը Կ. Պոլսում տեղի ունեցավ կուսակցության ընդհանուր պատգամավորական Գ ժողովը, որը որոշեց ՀՍՌԿ անունը փոխարինել Հայ ռամկավար կուսակցություն անվամբ<sup>5</sup> (այսուհետև՝ ՀՌԿ): Ըստ ՀՌԿ-ի ծրագրի՝ կուսակցության նպատակն էր

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 444:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նախապես որոշված էր կոչել Հայաստանի ռամկավար կուսակցություն, սակայն Հայաստանի խորհրդայնացման պատճառով ի վերջո անվանում են Հայ ռամկավար կուսակցություն:

«...սպահովել և պահպանել Միացյալ Հայաստանի անկախությունը, աշխատել Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր զարգացման համար, ամրապնդել կապերը Հայաստանի և արտասահմանի հայության միջև, քաջալերել ներգաղթը դեպի Հայաստան»<sup>1</sup>:

Քննարկվում է նաև Ազգային պատվիրակության նկատմամբ վերաբերմունքի հարցը, նշում, որ Սևրի դաշնագրի՝ Հայաստանին վերաբերող մասի անորոշ տրամադրությունները և Հայաստանի Հանրապետության ու ամբողջ Արևելքի քաղաքական խառնաշփոթ իրադրությունը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է հանուն «թրքահայ ժողովրդին և ի մասնավորի հանուն չազատագրված Հայաստանի, հետապնդել անոնց դրությեան խնդիրը և կենսական շահերը, նկատի ունենալով Կիլիկիո առանձնահատուկ կարևորութիւնը, որ անհրաժեշտ կընծայե դաշնակից պետությեանց և մասնավորապես ֆրանսիական կառավարությեան հետ մոտիկ հարաբերությեանց և բանակցությեանց մշակումը»<sup>2</sup>:

ՀՌԿ նշանավոր գործիչ Լևոն Մկրտչյանը 1920 թ. դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգային հանձնեց Հիշատակագիր, որում համառոտ ներկայացնում էր Հայկական հարցի ծագումն ու էությունը և հույս հայտնում, որ, «համաձայն Ազգերու ընկերակցութեան կանոնագրին 22 հոդվածին տրամադրութեանց և ոգիին»<sup>3</sup>, Հայաստանը պետք է ենթարկվի որևէ պետության պաշտպանության: Ընդգծվում էր այն միտքը, որ ՀՌԿ-ն ոչ թե Երևանի հանրապետության համար է հոգատարություն խնդրում, այլ այն «հողամասերուն համար, որոնք Սևրի դաշնագրին տրամադրութեանց և ԱՄՆ Նախագահին իրավարարական վճռին համաձայն պիտի անջատվին թրքական նախկին պետութենէն, կազմելու համար հայ պետութիւնը»<sup>4</sup>: Հիշատակագրում համոզմունք էր հայտնվում, որ վաղ թե ուշ Ռուսաստանում հաստատվելու էին ժողովրդավարական-սահմանադրական կարգեր և կառավարություն, որը կհարգի նախկին Ռուսական կայսրության կազմում ընդգրկված ժողովուրդների իրավունքները, և «Երևանի հանրապետութեան հողամասերը օր մը պիտի կցվին Սևրի դաշնագրով ստեղծված Հայաստանին, որուն կորիզը կկազմեն թուրք կայսրութեան հայ գավառները: Ահա այս ոգով է, որ Ազգերու ընկերակցութիւնը Հայաստանի օգնութեան պարտի հասնիլ»<sup>5</sup>: 1920 թ. դեկտեմբերի 30-ին Լ. Մկրտչյանն Ազգերի լիգայի ժողովի նախագահի անունից ստանում է պատասխան հեռագիր, որտեղ հայտնվում էր, որ ժողովը լիգայի խորհրդին խնդրել է կազմել հանձնաժողով, որը պետք է շարունակի Հայկական հարցի հանձնախմբի կողմից սկսված աշխատանքը, և որ հանձնախմբի

<sup>1</sup> ՀՀ ազգային արխիվ (այսուհետև՝ ՀՀԱԱ), ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 1:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> «Ազգ», 1921, թիվ 9:

<sup>5</sup> Նույն տեղում:



իրավասությունը պետք է տարածվի ոչ միայն նախկին Արևելյան Հայաստանի, այլև ամբողջ հայկական հողերի վրա<sup>1</sup>:

Համագումարի ավարտից անմիջապես հետո ՀՌԿ Կենտրոնական վարչությունը 1920 թ. դեկտեմբերի 13-ին իր շրջանակներին է դիմում թիվ 3 շրջաբերականով, որում նշվում էր. «Դժբախտաբար Հայաստանի աղետաբեր դեպքերը ավելի կնճռոտեցին կացութիւնը և չենք գիտեր, թե ինչ արդյունք պիտի ունենան կատարված աշխատութիւնները թե հայասերներու լիգային և թե Ազգաց ընկերակցութեան մեջ: Հաճրնի անկման և Կարսի գրավման առթիվ ժողովը դիմումներ հղեց Ազգերու լիգային Պոլսո բարձր կոմիտերներուն, որոնցմէ ստացաւ պատշաճ պատասխաններ»<sup>2</sup>: Նշվում էր նաև, որ Թուրքիան օգտագործում է Ռուսաստանի և Անտանտի միջև առկա հակասությունները՝ հօգուտ իր քաղաքական նպատակների, և այս պայմաններում հայերը գործնական օգնություն կարող են ակնկալել միայն Ռուսաստանից: Ընդգծելով, որ ՀՌԿ-ն ստեղծված ճգնաժամային կացության մեջ իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է «հայ ժողովրդի ֆիզիկական և անոր քաղաքական իրավունքներու պաշտպանութեան շուրջ», կենտրոնական վարչությունը հրահանգում էր բոլոր շրջանային վարչություններին երկրորդական նշանակություն տալ «Խորհրդային Ռուսաստանի հեղափոխութեան, Հայաստանի ներքին ընկերային կարգերու վրա առաջ բերած ազդեցութիւններուն»<sup>3</sup>:

1920 թ. դեկտեմբերի 26-ին ՀՌԿ Արևմտյան Եվրոպայի շրջանային վարչությանն ուղղված թիվ 4 շրջաբերականում ուղղակիորեն նշված էր. «Հայաստանը իր արտաքին քաղաքականութեան վարչութիւնը Ռուսաստանին կհանձնէ»<sup>4</sup>: Որպես ապացույց վկայակոչվում էին Խորհրդային Ադրբեջանի վիճակը, Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ծրագրերը և «Հայաստանի անկախութեան մասին որևէ ակնարկ չբովանդակող նոր կառավարութեան ողջույնի հեռագրերը»<sup>5</sup>: Շրջաբերականում նշվում էր նաև, որ նախկին Ռուսական կայսրության սահմաններում ստեղծված Հայաստանի Հանրապետությունը, փաստորեն, զրկված է իրական անկախությունից: Այնուհետև ռամկավարները շեշտում էին, որ եթե նույնիսկ «Ռուսահայաստանը կորցված համարենք, ապա պետք է շարունակենք առաջ տանել Հայկական հարցի վերաբերմամբ մեր ջանքերը»<sup>6</sup>:

Ելնելով ՀՌԿ Գ համագումարի որոշումներից՝ Կենտրոնական վարչությունը Հայկական հարցի առնչությամբ իր վերաբերմունքը բանաձևեց հետևյալ կերպ. «Հայ Ռամկավար կուսակցութեան իդեալը Միացեալ և Անկախ

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 47, էջ 26:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

Հայաստանն է: Սակայն հեղափոխական Ռուսաստանի վերաբերմունքը Հայաստանի ապագայի հանդեպ լի է անորոշությամբ և անակնկալներով: Ներկայիս ՀՀ ղեկը իր ձեռքն ունեցող հայ խորհրդային կառավարութիւնը նույնպես ճշտած չէ իր վերաբերմունքը Սևրի դաշնագրի վերաբերեալ կամ Միացեալ և Անկախ Հայաստանի մը իրականացման մասին<sup>1</sup>: Կուսակցությունը քանի որ չէր հրաժարվում Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջից, հետևաբար նրա շրջանային վարչությունները պետք է իրենց մամուլի օրգանների միջոցով պաշտպանեին այդ գիծը: Կենտրոնական վարչության այս որոշումը 1921 թ. հունվարի 24-ին թիվ 7 շրջաբերականով փոխանցվեց շրջանային բոլոր վարչություններին, որոնց միաժամանակ տեղեկացրին, որ ընդունված բանաձևը ենթակա չէ հրապարակման<sup>2</sup>:

1921 թ. հունվարի 14-ին Կ. Պոլսից Արտակ Դարբինյանը նամակ է ուղարկում Հայ Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդին՝ արևմտահայերի վիճակի և այն մասին, թե կուսակցության Հայաստանի խորհուրդն ինչպիսի քաղաքական գիծ պետք է որդեգրի: Անդրադառնալով արևմտահայերին՝ Դարբինյանն ընդգծում էր այն հանգամանքը, որ նրանք չեն հրաժարվել հայրենիք վերադառնալու իրավունքից, որը ձեռք են բերել միլիոնավոր զոհերի գնով: Նշվում էր նաև, որ արևմտահայությունն անհրաժեշտ էր համարում դաշնակիցների կողմից ճանաչված Ազգային պատվիրակության միջոցով հետամուտ լինել Արևմտյան Հայաստանի խնդրին: Իսկ Հայաստանի նոր կառավարության վարած քաղաքականության մասին Ա. Դարբինյանը գրում էր. «Հայաստանի նոր կառավարութեան ընկերային ծրագիրները մենք համարած ենք անմարսելի մեր ժողովրդի համար և անհրաժեշտ մեր հայրենիքի նման միջավայրի մը մեջ, բայց քանի որ դեպքերի ընթացքում այսօր Հայաստանի մեջ կտիրէ խորհրդային վարչաձեւ և ատոր ջատագով կուսակցութիւնը՝ Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնը իր ձեռքն է առել կառավարութեան ղեկը, պետք է թողույ, որ նա առանց ներքին ցուցումներու գործադրէ այն, ինչ որ Հայաստանի տվեալ պայմանները հնարավորութիւն կը տան»<sup>3</sup>:

Ընդգծենք, որ ռամկավարները Հայաստանում փետրվարյան դեպքերի նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորեցին, դրանք համարեցին ավելորդ եղբայրասպան կռիվներ, որոնք, նրանց կարծիքով, միայն նոր աղետներ պատճառեցին բազմաչարչար հայ ժողովրդին: Հատկանշական է, որ ռամկավարների պաշտոնաթերթ «Ապագան» փետրվարյան ելույթի պատճառների կապակցությամբ կարողանում էր վեր կանգնել նեղ կուսակցականությունից և չէր բավարարվում սուսկ կողմերից մեկի քննադատությամբ, այլ փաստերով ցույց էր տալիս, որ նորահաստատ բոլշևիկյան

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 49, էջ 8-9:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 47, էջ 37:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 5, էջ 1-2:

իշխանությունն իր վարած քաղաքականությամբ փաստորեն պատճառ դարձավ ժողովրդական նոր հուզումի<sup>1</sup>:

Արտահայտելով ՌԱԿ-ի դիրքորոշումը՝ Դարբինյանը նամակով դիմում է Հայաստանի նոր կառավարությանը և նշում, որ գեներլ ուժով հնարավոր չէ լուծել Արևմտյան Հայաստանի հարցը, իսկ իրենք հավատ չէին տածում, թե Ռուսաստանը կլուծեր այն, որովհետև «...վերջին իրադարձությունները ցույց կուտան, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը չի հետեւելու Միացեալ և Անկախ Հայաստանի խնդրի իրականացմանը»<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ՝ Դարբինյանը ցույց էր տալիս, որ քեմալականներն իրենց հերթին ոչ միայն «Տաճկահայաստանէն հրաժարվելու մտադիր չեն, այլ նույնիսկ դեկտեմբերի 2-ի դաշնագրէն ալ ձեռք քաշելու միտք չունին»<sup>3</sup>: Նամակի վերջում Դարբինյանը հանգում էր հետևյալ եզրակացության. «Այս ծանրակշիռ հանգամանքները նոյնպէս կթելադրեն մեզ Տաճկահայաստանի ազատագրութեան յոյսը չկապել միայն Հայաստանի նոր կառավարութեան բարոյական ջանքերու հետ և հարկադրել նրան, որ ճգնուի իր ուժերէն վեր եղող բեռան տակ: Այս տեսակետն է, որ կթելադրէ արտասահմանի հայութեանը չհրաժարուիլ Սեւրի դաշնագրով կամ անկէ դուրս Վերսալի դաշնագրի տված սկզբունքով պահանջել Տաճկահայաստանի ստեղծում»<sup>4</sup>:

1921 թ. Մոսկվայի պայմանագրով խորհրդային իշխանությունը, փաստորեն, բացասական լուծում տվեց Հայկական հարցին<sup>5</sup>: Սակայն Ազգային և Հայաստանի նախկին հանրապետության պատվիրակությունները շարունակում էին իրենց դիվանագիտական գործունեությունը: Պողոս Նուբարի ղեկավարած պատվիրակությանը սատարող ռամկավարները, չնայած օտարի հետ հույսեր չկապելու իրենց հայտարարություններին, իրականում Եվրոպայից օգնություն էին ակնկալում: Ուստի պատահական չէր, որ 1921 թ. փետրվարի 19-ի «Ապագայի»՝ «Հայկական հարցը և Լոնդոնի խորհրդաժողովը» խորագրով խմբագրականում նրանք համոզմունք էին հայտնում, որ Լոնդոնում գումարվելիք կոնֆերանսում կքննարկվի նաև Հայկական հարցը: «Լոնդոնի ժողովէն մենք կսպասենք, որ Հայկական հարցին տա այն նշանակութիւնը, որուն արժանի կը ընէ Դաշնակիցներուն դատին համար հայ ժողովրդին անհուն գոհաբերութիւնը»<sup>6</sup>: Այնուհետև նշվում էր, որ Լոնդոնի կոնֆերանսից ակնկալում են Արևմտյան Հայաստանի չորս նահանգների ազատագրումը, որտեղ կկարողանային պատասպարվել հայ գաղթականները: Միննույն ժամանակ ռամկավարները հույս ունեին, որ Լոնդոնի խորհրդա-

<sup>1</sup> «Ապագայ», 1921, թիվ 14.

<sup>2</sup> ՀԱՍ, ֆ. 424, ց. 1, գ. 5, էջ 2:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>5</sup> **Զոհրաբյան Է. Ա.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 115:

<sup>6</sup> «Ապագայ», 1921, թիվ 16:

ժողովը չի անտեսի կիլիկիահայության հարցը, իսկ Ֆրանսիան «...խղճի պարտք մը պիտի համարէ կարելի բոլոր ապահովութիւնները ձեռք բերել Կիլիկիո հայ ժողովրդին գոյութեան համար»<sup>1</sup>:

Հայկական պատվիրակությունները մասնակցեցին 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած մեծ տերությունների կոնֆերանսին: Իրենց դիրքորոշումը ճշգրտելու նպատակով ռամկավարները Կ. Պոլսում խորհրդակցություն անցկացրին, որին հրավիրեցին Ազատական կուսակցության կենտրոնական վարչությանը և ՀԺԿ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ պրոֆեսոր Ա. Աղաջանյանին: Խորհրդակցության արդյունքում մասնակիցները հանգեցին այն հետևությանը, որ Պողոս Նուբարի պատվիրակությունը պետք է պաշտպանի Սևրի դաշնագրով ճանաչված Հայաստանի քաղաքական իրավունքները: Այնուհետև փետրվարի 24-ին հեռագիր ուղարկեցին նրան, ուր շեշտում էին, որ իրենք Հայաստանի գոյությունն անհնարին են համարում առանց Տրապիզոնի նավահանգստի կցման և ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ընդունման: Ռամկավարները նրանից պահանջում էին հետամուտ լինել, որ Հայաստանի սահմաններում պարտադիր ընդգրկվեն Էրզրումը և Տրապիզոնը: Միաժամանակ խնդրում էին առաջ մղել նաև Կիլիկիայի հարցը<sup>2</sup>:

Դեռևս կոնֆերանսի նախօրյակին ԱՄՆ-ի ռամկավարները գրում էին, որ Անկախ Հայաստանի կորիզը պետք է լինի ոչ թե Ռուսական Հայաստանը, այլ Թուրքահայաստանը<sup>3</sup>: Այդ նույն ոգով Լոնդոնում Պողոս Նուբարը պնդում էր, որ պետք է իրագործվի Սևրի պայմանագրով Հայկական հարցին առնչվող որոշումը՝ շեշտելով, որ Կովկասյան Հայաստանի անցումը ռուսական տիրապետության տակ չի կարող խոչընդոտել Արևմտյան Հայաստանի վերաբերյալ Սևրի դաշնագրի որոշումների իրագործումը<sup>4</sup>: Թուրքական պատվիրակությունը Լոնդոնում նույնպես դրեց առավելագույն պահանջներ, որոնց թվում էին Կիլիկիայի վերադարձը և Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումը:

Ինչևէ, Լոնդոնի կոնֆերանսը որևէ համաձայնության չհանգեց Հայկական հարցի կապակցությամբ: Դաշնակիցները տարբեր պատճառաբանություններով հրաժարվեցին Հայկական հարցին դրական լուծում տալուց՝ փաստորեն հրաժարվելով Սևրի պայմանագրից: Կոնֆերանսում նրանք առաջարկեցին Թուրքիայի արևելյան նահանգներում Հայկական «Ազգային օջախի» ստեղծման մշուշապատ և որևէ մեկին ոչինչ չպարտադրող գաղափարը, որից քեմալականները շուտով հրաժարվեցին:

---

<sup>1</sup> Նույն տեղում, թիվ 18:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 49, էջ 23:

<sup>3</sup> «Ազգ», 1921, թիվ 5:

<sup>4</sup> **Դարբինեան Ա.**, նշվ.աշխ., էջ 447:

1921 թ. հունիսի 10-ին Փարիզում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի նախկին հանրապետությունների ներկայացուցիչները ստորագրեցին «դաշինք համագործակցության վերաբերյալ» փաստաթուղթը, որն ուղղված էր Խորհրդային Ռուսաստանի դեմ: Ռամկավարների անհանգստացնում էր հատկապես այդ դաշինքի 7-րդ կետը, որով ՀՀ նախկին կառավարության ներկայացուցիչ Ավետիս Ահարոնյանն ընդունում էր, որ Միացյալ Հայաստանի սահմանը պետք է լիներ 1914 թ. ռուս-թուրքական սահմանագիծը, և դրանով փաստորեն հրաժարվում էր Արևմտյան Հայաստանից<sup>1</sup>: Ռամկավարները վրդովմունքով հանդես եկան այդ համաձայնագրի դեմ, որով «Ահարոնյանը հրաժարած էր թրքական Հայաստանին»<sup>2</sup>:

Կուսակցության կենտրոնական վարչությունը 1921 թ. հունիսի 25-ի շրջաբերականով իր կառույցներին հայտնում էր. «Անկախ ընկերային հարցերէ, որոնք ինչքան ալ ժամանակաւոր բնոյթ ունենան, հայերու նախաձեռնութեամբ չէ, որ պիտի լուծուի, ամէն հայի պարտքն է օգնել Հայաստանի տնտեսական վերականգնումին և ամոքել անոր ներկայիս անսահմանափակ թշվառութեանը»<sup>3</sup>: Ռամկավարները կոչ են անում Միյուռքի հայությանը անտեսել Հայաստանի քաղաքական կարգերը և օգնության ձեռք մեկնել Հայաստանի սովահար ժողովրդին:

Դեռևս 1918 թ. սկսված մերձեցման շնորհիվ Հայ Ազատական և Ռամկավար կուսակցությունները միավորվում են և 1921 թ. հոկտեմբերի 1-ին Կ. Պոլսում հռչակում նոր՝ Ռամկավար ազատական կուսակցության ծնունդը: Այն նոր որակ էր հայ քաղաքական կյանքում և նոր հիմքերի վրա դրեց ու շարունակեց իր անգիջում պայքարը Հայկական հարցի դրական լուծման համար, ինչին հետամուտ է նաև մեր օրերում:

Այսպիսով, լավ ճանաչելով հակառակորդին, հայ ռամկավարները Հայկական հարցի նկատմամբ հանդես էին բերում զգուշավոր, չափավոր և հավասարակշռված մոտեցումներ: Դեմ լինելով կտրուկ, առավել ևս ցուցադրական գործելակերպին՝ նրանք եղան և մնացին ինքնապաշտպանության ջատագովներ: Ռամկավարները ողջունեցին փետրվարյան հեղափոխությունը, որովհետև ցուցաբերելով իրատեսական մոտեցում՝ համոզված էին, որ հայությանը վերջնական կործանումից կարող էր փրկել միայն ժողովրդավարական Ռուսաստանը: Հետագայում ևս չընդունելով հանդերձ բոլշևիկների բռնի գործելակերպն ու գաղափարական կարծրատիպերը՝ ռամկավարները շարունակում էին հույսեր կապել Ռուսաստանի հետ և կոչում համայն հայությանը՝ բոլոր միջոցներով սատարել Հայաստանին ու հայաստանաբնակ հայությանը:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 492:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 402:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 50, էջ 36:

**Suren Sargsyan – *The Armenian Question and Armenian Constitutional Ramkavars***

The Armenian Constitutional Ramkavar Party founded in 1908 has adopted the Armenian Question and has always been consistent in the solution of it in its program documents. Knowing their enemy quite well, the Ramkavars manifested a cautious, moderate and balanced approach to the Armenian Question. Being against sharp and all the more the demonstrative mode of action, they were and have remained advocates of self-defence.

In the second decade of XX century along with the new situations emerged in the international relations the Ramkavars have sometimes changed their tactics but their strategy has always remained the same. The development of events proved that being steadfast supporters of self-defence, they were more realistic than the other political forces that entered the scene with patriotic appeals. Later, regardless of which political party ruled in Armenia, the Ramkavars, often being against many propositions of their ideology and mode of action, were and have remained true supporters of their country.